ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ
ASIAN DEVELOPMENT BANK

Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) հիմնադրվել է 1966 թվականին: Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է ԱԶԲ-ին 2005 թվականից՝ «Ասիական զարգացման բանկի հիմնադիր համաձայնագիրը» 2005 թվականի մայիսի 24-ին ՀՀ ԱԺ կողմից վավերացվելուց հետո:

ԱԶԲ-ի հիմնական նպատակն է՝ նպաստել Ասիայի և Հեռավոր Արևելքի պետությունների տնտեսական աճին՝ ուղղակի վարկավորման և տեխնիկական աջակցության և դրամաշնորհների տրամադրման միջոցով: Միջոցները հիմնականում տրամադրվում են հետևյալ ոլորտների զարգացման համար՝ ենթակառուցվածքներ (ջրամատակարարում, էներգերիկա, տրանսպորտ, քաղաքային զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ) շրջակա միջավայր, տարածաշրջանային համագործակցություն և ինտեգրում, ֆինանսական հատված, կրթություն:

ԱԶԲ-ը վարկերը տրամադրում է 2 աղբյուրներից՝ Սովորական կապիտալ ռեսուրսներից (ՍԿՌ) և Ասիական զարգացման հիմնադրամից (ԱԶՀ): ՍԿՌ-ից վարկերը տրամադրվում են կոմերցիոն պայմաններով՝ շուկայական տոկոսադրույքով և համեմատաբար ավելի կարճ՝ 15-25 տարի ժամկետով: ԱԶՀ-ը նախատեսված է երկարաժամկետ վարկավորման համար (25-40 տարի) արտոնյալ՝ 1-3% տոկոսադրույքով:

2014թ. օգոստոսի 15-ին Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Տնօրենների խորհուրդը հաստատել է, որ պաշտոնապես ավարտվել է Ասիական զարգացման հիմնադրամից արտոնյալ պայմաններով վարկային միջոցների տրամադրումը և 2017 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունը կարող է նոր վարկային միջոցներ ներգրավել միայն ԱԶԲ Սովորական կապիտալ ռեսուրսներից:

ԱԶԲ սուվերեն վարկավորման պորտֆելը 2020թ. փետրվարի դրությամբ կազմում է մոտ 600 մլն ԱՄՆ դոլար:

2019թ. նոյեմբերի 22-ին ԱԶԲ-ն հաստատեց Հայաստանի՝ Երկրի գործընկերության 2019-2023թթ. ռազմավարությունը և Գործառնությունների 2020-2022թթ. ծրագիրը: Երկրի գործընկերության 2019-2023թթ. ռազմավարությունը

նպատակ ունի աջակցելու Հայաստանի ներառական աճին՝ ենթակառուցվածքների, մարդկային կապիտալի զարգացման, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի միջոցով: